ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեծ շուքով նշվեց Ս. Վարդանանց տոնը, որի առիթով, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը:

Սրբազան Հայրն արարողության ավարտին հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով մեր ժողովրդի և Եկեղեցու կյանքում Ավարայրի ճակատամարտի նշանակությանը և նրա քրիստոնեական ընկալմանը (տե՛ս էջ 18):

Հայ Առաքելական Եկեղեցու ընկալյալ ավանդության համաձայն՝ Ս. Վարդանանց տոնը նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության օրն է: Պատարագիչ Սահակ Սրբազանը հոգևորականների և ներկա բազում հավատացյալների անունից ջերմորեն շնորհավորեց Վեհափառ Հայրապետին այս առիթով՝ մաղթելով քաջառողջ կյանքի երկար օրեր և անսասան հովվապետական գավազան: Սրբազան Հայրն ուրախությամբ արձանագրեց, որ Նորին Սրբության գահակալության օրոք յուրովի վերազարթոնք է ապրում Հայ Եկեղեցին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Այնուհետև Իջման Սուրբ Սեղանի առջև կատարվեց Հայրապետական մաղթանք, որի ընթացքում ներկաներն աղոթեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսության անսասանության և Վեհափառ Հայրապետի կենաց արևշատության համար:

Ս. Պատարագից հետո Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Վարդանանց տոնին նվիրված հանդիսություն: Տերունական աղոթքին, ՀՀ օրհներգին և Ճեմարանի քայլերգին հաջորդեց Ճեմարանի փոխտեսուչ Տ. Դավիթ աբեղա Քարամյանի բացման խոսքը: Օրվա խորհրդի մասին բանախոսությամբ հանդես եկավ Ճեմարանի հայ ժողովրդի պատմության դասախոս Ավետիս Հարությունյանը՝ անդրադառնալով հայ ժողովրդի պատմության ընթացքում Վարդանանց անպարտելի ոգու դրսևորումներին:

Հանդիսության վերջում ներկաներին իր հայրական պատգամն ու հորդորը փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը խոսեց Ս. Վարդանանց խորհրդի, հայոց ոգու անպարտելիության հաղթանակի մասին, որոնցով դարեր շարունակ ներշնչվել են մեր նախնիները՝ որպես ազգ և ժողովուրդ: Հայոց Հայրապետը հորդորեց ամենքին Ավարայրի հերոսամարտի ոգեկոչումով, Վարդանանց նույն արիությամբ դիմակայել բոլոր փորձություններին և վտանգներին, որոնք մեր ժամանակներում ծառացած են մեր ժողովրդի առջև և սպառնում են մեր ազգային ինքնությանը, քրիստոնեական նկարագրին ու բարոյահոգեբանական արժեհամակարգին: Նորին Սրբությունը Հայրենիքի, հայոց հավատի և ժողովրդի պաշտպանության սրբազան գործում մեծապես կարևորեց եկեղեցականների առաքելությունը՝ քաջությամբ և վճռականորեն դուրս գալ նոր մարտահրավերներին դեմ հանդիման:

Ս. Վարդանանց տոնին նվիրված շարականներով, ազգային երգերով և բանաստեղծություններով հանդես եկան ճեմարանականները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԱՍՏԱՐԱԿԱՆ ԽՐԱՄԱԿԱՆՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՑԱՆԿԱՆԻԿՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՐՀՆՈՒՄ Է ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ
Մ. ԷՋՄԻԱԾԻՆ ԵԿԱԾ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՋԻՆՎՈՐՆԵՐԻՆ